ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2023թ. № 92

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0228-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,131 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքում գտնվող 06-006-0228-0022 կադաստրային ծածկագրով 0,131 հեկտար մակերեսով հողամասը, դրա վրա գտնվող բակելի տունը և ավտոտնակը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2020 թվականի դեկտեմբերի 16-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 2154) փոխանցվել է Ժանետա Ասատուրի Բոստանչյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060064K69XCQ) և Ժանետա Ասատուրի Բոստանչյանի (ծնված՝ 10.02.1947թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0228-0022 կադաստրային ծածկագրով 0,131 հեկտար մակերեսով հողամասին դրա վրա գտնվող 184,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 101,7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «ք. Սպիտակ Վանաձորի խճուղի, 4-րդ փակուղի, 2 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունվարի 30
ք.Սպիտակ